Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16873

364
4-21

20
W7

2011

364
Կ-21
614·6
Գ-31

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ

ՀԱՅՈՑ

Ի ԲԵՐԱ-ՇԻՇԼԻ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ Ի ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1884

364
Հ-91

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ

Ի ԲԵՐԱ—ՇԻՇԼԻ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ

Ի ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ
ԲԵՐԱ
1884
ՇԻՇԼԻ

ՄԱՍՆ Ա.

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Յօդուած 1.— Բերա-Շիշլիի ազգային Գերեզմանատան քաղաքավարական յատակագծին՝ բաժնուած է հինգ կարգ թաղերու։ Առաջին չորս կարգիններն մասնաւոր գերեզմանատեղիք են, (Տես Յօդ. 7^{րդ}.), և հինգերորդ կարգիններն՝ ընդհանուր գերեզմանատեղիք։ (Տես Յօդ. 8^{րդ})։

Յօդ. 2^{րդ}.— Գերեզմանատունն պիտի ունենայ պահապանի, քահանայի և յարակից սենեակներ պարունակելու բաւական շէնքեր և մի մատուռ, որք պիտի կառուցուին հեղգհեռէ շրջապատի շինութիւնէն յետոյ։

Յօդ. 3^{րդ}.— Իւրաքանչիւր Հայ իրաւունք ունի՝ յետ մահուանն՝ թաղուիլ Շիշլիի ազգային Գերեզմանատան մէջ, օրինական արձանագրութեան կատարմամբ՝ ի ձեռն Կարգադիր Յանձնախմբին, և սահմանեալ դրամական փոխարինութեանց հատուցմամբ՝ առ մնացուկքն Գերեզմանատան, (Տես Յօդ. 6^{րդ}. 7^{րդ}. և 8^{րդ}.)։

Յօդ. 4^{րդ}.— Եկեղեցականաց յատուկ թաղն անմիջապէս մատրան առընթեր է։ Անոնց համար դրամական պահանջում չկայ։ Եկեղեցականք իրաւունք ունին՝ յետ մահուան՝ թաղուելու անոնց պարագայք և ազգականք։

Լ. Ս. Ս. Ի. Ա. Ի. Ա. Ի. Ա

Յօդ. 5րդ.— Շիշլիի ազգային Դերեզմանատան մէջ առանց եկեղեցական արարողութեան թաղումն արգիլեալ է։

Եկեղեցական արարողութենէ զրկելոց համար մասնաւոր շրջափակ մի յատկացեալ է ի խորշ մի դերեզմանատան, և անդանօր տապանաքար չդրուիր։

Յօդ. 6րդ.— Մէն մի ննջեցելոյ համար արձանագրութեան և դերեզմանավարի ծախուց փոխարինութիւն մի սահմանուած է, ըստ հետեւեալ ցուցակի, զոր անխտիր պարտին վճարել ննջեցելոյն տեարք։

Մատրան ուղղոյ մասնաւոր դերեզմանատեղեաց համար 1 1/2 Օսմ. Լիրա
Առաջին կարգի » » » 1 » »
Երկրորդ » » » » 1/2 » »
Երրորդ » » » » 1/4 » »
Ընդհանուր » » 1/4 » »

Անտէր և տնանկ ննջեցեալք ձրիաբար կը թաղուին ընդհանուր դերեզմանատեղեաց մէջ։

Յօդ. 7րդ.— Փափաքողք կարող են մասնաւոր դերեզմանատեղեաց մէջէն իրենց համար որոշել յատուկ թաղ, դրամական փոխարինութիւն մը հատուցանելով ըստ հետեւեալ ցուցակի, և սեպհականութեան արտօնագիր ստանալով։

Մատրան ուղղոյ մէն մի քառակուսի մէթրոյի համար 3 Օսմ. Լիրա.
Առաջին կարգի » » » » » 2 » »
Երկրորդ » » » » » » 1 » »
Երրորդ » » » » » » 1/2 » »

Յօդ. 8րդ.— Ընդհանուր դերեզմանատեղեաց մէջ կարգաւ կը թաղուին ննջեցեալք, և անդանօր յատուկ թաղեր չեն կրնար սահմանուիլ։ Բայց անդ թաղեալ ննջեցելոյ տեարք կարող են տապանաքար դնել դերեզմանին վրայ, ըստ կարեւորութեանն 1—3 Օսմ. Լիրա վճարելով Դերեզմանատան տնտուկին։

Յօդ. 9րդ.— Ո՛չ ոք իրաւունք ունի Կարգադիր Յանձնախմբին նշանակած սահմանէն դուրս ննջեցեալ թաղելու, և նորա հաւանութիւնն չստացած որ և է բան շինելու Շիշլիի ազգային Դերեզմանատան մէջ, այլ ամէն ոք պարտաւոր է համակերպիլ հաստատեալ կարգաց և կանոնաց, ի գործ դնելով անթերի զորամատրութիւն տնօրէն։

ՄԱՍՆ Բ.

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Յօդ. 10րդ.—Բերա-Շիշլիի ազգային Դերեզմանատան Կարգադիր Յանձնախումբը կը կազմուի եկեղեցական և աշխարհական եօթն անդամներէ, որք՝ Բերայի Թաղ. Խորհրդոյ առաջարկութեամբ՝ Ազգային Վարչութեան Խառն Ժողովէն կանուանին պատրիարքական կոնդակաւ։

Յօդ. 11րդ.— Կարգադիր Յանձնախմբին պաշտօնն է,

Ա. Ըստ վաւերացեալ յատակագծին՝ Դերեզմանատան ներքին ուղիները բանալ, մասնաւոր և ընդհանուր դերեզմանատեղիքն որոշել, Դերեզմանատունն որմնափակ պատսպարել և հեղհեղէ պահպանի՝ քահանայի և այլ սենեակներն ու մատուռն կառուցանել անդանօր։ (Տես Յօդ. 2րդ.)։

Բ. Ննջեցելոց դերեզմանատեղիքն ցոյց տալ, և թաղելոց արձանագիրքը բռնել՝ իւրաքանչիւրոյն թաղեալ տեղւոյն ճշգրիտ յիշատակութեամբ։

Գ. Յատուկ թաղ խնդրողներուն տեղ որոշել, կանխաւ որոշեալներն օրինաց համաձայն կարգադրել, և ըստ այնմ սեպհականութեան արտօնագիր տալ՝ վաւերացեալ ի Թաղ. Խորհրդոյ Բերայի և յԱզգ. Պատրիարքարանէ։

Դ. Մէն մի ննջեցելոյ, յատուկ թաղերու և տապանաքար դընելու համար սահմանեալ դրամական փոխարինութիւններն, (Տես Յօդ. 6րդ. 7րդ. 8րդ.), ինչպէս նաեւ Շիշլիի ազգային Դերեզմանատան վերաբերեալ հանգանակութիւն՝ կամակ՝ նուէր և այլ ամէն տեսակ հասոյթներն՝ օրինական տրամադրութեանց համաձայն գանձել, և նոյն վերաբերեալ շինութեանց և այլ բոլոր ծախքերն անտեսել։

Յօդ. 12րդ.— Կարգադիր Յանձնախումբն՝ իւր պաշտաման գրծեալ սահմանին մէջ գործելու ազատ մնալով հանդերձ՝ պատասխանատու է առ Թաղ. Խորհուրդն Բերայի, և պարտաւոր՝ իւր գործողութեանց համարն ու հաշիւն ներկայել տարուէ տարի առ նոյն

Թաղ. Խորհուրդն, որ կը մատուցանէ զանոնք Ազգ. Կեդր. Վարչութեան։

Յօդ. 13ՐԴ.— Ներկայ Կանոնադրի տրամադրութեանց մանրամասնութեան վերաբերեալ անօրինութիւնք Կարգադիր Յանձնախմբի երաւասութեան կը պատկանին։

Յօդ. 14ՐԴ.— Արդի Կարգադիր Յանձնախմբին պաշտօնավարութիւնը կը տեւէ մինչ ցնոր անօրինութիւն Ազգ. Կեդր. Վարչութեան.

ՅԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾ

Նոքա՝ որք նախ քան զհաստատութիւն ներկայ կանոնադրութեան՝ յատուկ թաղերս որոշած են իրենց համար Բերա-Շիշլիի ազգ. Գերեզմանատան մէջ, պարտին՝ առ ի վայելել զերաւունս սեպհականութեան՝ ճշդել ըստ յատակագծին իրենց թաղերուն սահմաններն, և ներկայ Կանոնադրի հիմանց վրայ կարգադրել՝ Յանձնախմբին հետ համաձայնութեամբ՝ իրենց թաղերուն դրամական փոխարինութեան վճարումն, և յետ ամբողջովին հատուցման՝ օրինական արտօնագիրն ստանալ, մինչեւ ցվերջ Յունիս ամսոյ յառաջիկայ 1885 տարւոյ։

Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովն՝ իւր 1884 յուլիս 11ի նստին մէջ՝ սոյն Կանոնագիրն ընդունելով վաւերեց, և յանձնեց զայն Թաղ. Խորհրդոյն գործադրել՝ ի ձեռն Կարգադիր Յանձնախմբին ազգային Գերեզմանատան ի Բերա-Շիշլի։

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
25 ՅՈՒԼԻՍ 1884

Ստորագրեալ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պ—տրէարքական

ՅԱՏԱԿԱԳԻԾ

Ազգային Գերեզմանատան Հայոց

Ի ԲԵՐԱ-ՇԻՇԼԻ

Կարգադիր Յանձնախմբին ձեռամբ պատրաստուած,
Թաղ. Խորհրդոյ կողմէ ընդունուած, 'ի 18 Մայիս 1884,
եւ Ազգային Կեդր. Վարչութենէ վաւերացուած, 'ի 11 Յուլիս 1884.



ԱՆՈՒԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՀԱՑ

1. Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

2. Ս. Սահակ
3. Ս. Մեսրոպ
4. Ս. Արիստակէս
5. Ս. Վրթանէս
6. Ս. Խորենացի
7. Ս. Նարեկացի
8. Ս. Եղիշէ
9. Ս. Ղեւոնդ
10. Ս. Յուսիկ
11. Ս. Ներսէս Մեծն
12. Ս. Վարդան
13. Ս. Շնորհալի
14. Ս. Տրդատ
15. Ս. Աբգար
16. Ս. Վահան
17. Ս. Ատամ

† — Տեղի մատրան
Ե. Թ. — Եկեղեցականաց Թաղ
Մ. — Մատրան ուղղոյ մասնաւոր գերեզմանատեղի
Ա. — Առաջին կարգի » »
Բ. — Երկրորդ » » »
Գ. — Երրորդ » » »
Ընդհ. — Ընդհանուր գերեզմանատեղի
Շ. Ջ. — Շրջափակ կրօնական արարողութենէ զրկելոց
Պ. Ա. — Պահապանի, եւ անդամաղենութեան սենեակը
Ք. Ս. — Քահանայի սենեակ եւ սրահ
Մ. Դ. — Մեծ դուռն
Փ. Դ. — Փոքր դուռն

7.

722

605

2013

Հայաստանի Ազգային գրադարան
NL0435438